# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված*

1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ. № 42: ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.




Ամենափրկիչ եկեղեցին երկրաշարժից հետո: Լուսանկարը՝ Հմ. ՎԱՐԱՊԵՏՅԱՆԻ



№ 10 դպրոցը: Լուսանկարը՝ Ստ. ԳՈՒԼՅԱՆԻ

## ՄԽԻԹԱՐԱՆՔԸ ՄԻԱՅՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

### ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԽՈՍՔԸ

*Ճշմարիտ խոսքի բարեկամներ, գրողներ։ Ես ձեզ եմ դիմում, թանկագին եղբայրներ։*

*Այս ի՞նչ պատահեց։ Այս ի՞նչ դժբախտություն եկավ մեր գլխին։*

*Թերևս, այս ամենին դժբախտություն չես էլ ասի...*

*Թերևս, այս անաստված բանը անուն էլ չունի...*

*Ես լսել եմ ողբերգություն, սակայն այսպիսի խորանդունդ ողբերգություն չեմ իմացել։*

*Ես անաստվածություն եմ կոչում այսօրվա դժբախտությունը, որովհետև այդ ահավոր գործում աստծո մատը չի կարող խառը լինել։ Էջմիածին ու Զվարթնոց ունեցող ժողովրդի գլխին աստված չէր կարող այսպիսի աղետ բերել։ Այս ամենը դժոխքի ձեռքով սարքված մեղք է։*

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

# Դեկտեմբերյան օրերի խրոնիկա



Ղազախստանի կինոնկարահանողները Լենինականում: Լուսանկարը՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



Կենտրոնական հեռուստահաղորդումների աշխատակիցը ներկայացնում է քաղաքին նվիրված լուսանկարային ցուցահանդեսը: Լուսանկարը՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

## «ԱՐԱԳԱԾ» ԾԽՄԱՓՈՂՈՑԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ





Լուսանկարները՝ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

## ԳԹԱՍԻՐՏՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Ամբողջ երկրում չեն նվազում Հայաստանի աղետի մեջ ընկած ժողովրդի նկատմամբ հիրավի համաժողովրդական գթասրտության զգացումը, նրան օգնելու ցանկությունը:

ԿԻԵՎ «ՈՒՍՍՀ գիտությունների ակադեմիայի Ե. Օ. Պատոնի անվան էլեկտրազոդման ինստիտուտ» միջճյուղային գիտահետազոտական համալիրի գիտնականների, բանվորների և մասնագետների կոլեկտիվը տուժածների օգնության ֆոնդին է հատկացրել 100 հազար ռուբլի վթարային և նորոգման-վերականգնման աշխատանքների համար ուղարկել է զոդման սարքավորումներ, մեծ քանակությամբ բարձրորակ էլեկտրոդներ: Ստեղծվել են մասնագետների հատուկ բրիգադներ, որոնք կաշխատեն աղետյալ գոտում:

ՄՈՒՐՄԱՆՍԿ: Ինքնաթիռներով Հայաստան են մեկնել վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ամեն միջոցներով զինված հարվածային շինարարական ջոկատներ: Նրանք իրենց հետ տանում են տեխնիկա, սննդամթերքների պաշար, վրաններ: Մինչև մեկնելը յուրաքանչյուր խումբ արդեն գիտեր, թե որտեղ պետք է աշխատի: Այսօրվա դրությամբ Մուրմանսկի մարզի աշխատավորները տուժածների օգնության ֆոնդին են փոխանցել մեկուկես միլիոն ռուբլի, այդ թվում 100 հազարը՝ օտարերկրյա վալյուտայով:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Հարգելի համաքաղաքացիներ, ուրբաթ օրերին լույս է տեսնում «Կումայրի» թերթի «Հիշողություն» հավելվածը, հրատապ մահազդները՝ (հուղարկավորություններ, ցավակցություններ) այսուհետև կտպագրվեն նաև «Հիշողություն» հավելվածում:*

*Ազգուշ Զուլհակյանը, Հեղուշ, Անահիտ, Խաչիկ, Էմետ, Ջեմմա Կարապետյանները, Ալբերտ Պողոսյանը, Մարինե Ղազարյանը խոր կսկիծով հայտնում են ամուսնու, որդու, հոր, եղբոր՝*

ԶՈՆԻԿ ԱՇՈՏԻ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

*անժամանակ մահը:*
*Հուղարկավորությունը՝ սեպտեմբերի 6-ին, Աթարբեկյան № 123 տնից:*

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԿՈՒՄԱՅՐԻԻ ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ № 2761